

## ԻԻՀ Արևմտյան Ատրպատականի նահանգի Խոյի կուսակալության պատվիրակությունը ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում

15.11.2012



Մ/թ նոյեմբերի 14-ին Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանի մոտ կայացավ հանդիպում, որին մասնակցում էին ԻԻՀ Արևմտյան Ատրպատականի նահանգի Խոյի կուսակալության պատվիրակության անդամները: Պատվիրակությունը ղեկավարում էր կուսակալ Ղուլան Հուսեյն Ամմարին: Պատվիրակության կազմում էին Խոյի քաղաքապետ Յուսեֆ Քարբալայի Խալալին, Խոյի նահանգապետարանի աշխատակից Փայլակ Սահակյանը և քաղաքապետարանի մշակութային, զբոսաշրջային, գյուղատնտեսության և լրատվական ստորաբաժանումների ղեկավարները: Մարզպետարանում կայացած պատվիրակությունների ընդլայնված կազմով հանդիպմանը հայկական կողմից մասնակցում էին ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Սամվել Թարվերդյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վանիկ Խուդավերդյանը, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, գյուղատնտեսության կրատվական ստորաբաժանումների պատասխանատու աշխատակիցներ:

Նշենք, որ ՀՀ Վայոց ձորի մարզի և Իրանի Իսլամական Հանրապետության Արևմտյան Ատրպատականի նահանգի Խոյ գավառի միջև փոխհամագործակցության համաձայնագիր է կնքվել դեռևս 2010 թվականին: Քննարկվեց փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող, տարածաշրջանների միջև զբոսաշրջության, մշակութային, մարզական, գյուղատնտեսության ոլորտներում համագործակցության հետ կապված հարցերի լայն շրջանակ:

## Եղեգնաձորի երկրագիտական թանգարանում բացվել է հայ և իրանցի արվեստագետների ստեղծագործությունների համատեղ ցուցահանդեսը

14.11.2012



Այսօր ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանի, ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մոհամմադ Ռեիսիի և ԻԻՀ Արևմտյան Ատրպատականի Խոյի կուսակալ Ղոլամ Հուսեյն Ամարիի ներկայությամբ Եղեգնաձորի երկրագիտական թանգարանում բացվեց հայ և իրանցի արվեստագետների ստեղծագործությունների համատեղ ցուցահանդեսը:

Ներկաներին ողջունեցին ՀՀ Վայոց ձորի մարզպետը, ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանը և ԻԻՀ Արևմտյան Ատրպատականի Խոյի կուսակալը: Նրանք հաջողություններ մաղթեցին ՀՀ Վայոց ձորի մարզի և ԻԻՀ Արևմտյան Ատրպատականի Խոյի կուսակալության միջև հաստատված բարեկամական հարաբերություններին:

Ցուցահանդեսի բացման ժապավենի կտրման պատիվը վերապահվել էր Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանին և Արևմտյան Ատրպատականի Խոյի Կուսակալ Ղոլամ Հուսեյն Ամարիին:

Ցուցահանդեսում ներկայացված էին գեղանկարներ և ձեռքի աշխատանքներ: